* * *

Քեզ, գոված մուսա, ես չեմ ճանաչում,
Ոչ ձեռքիս ունեմ ոսկեղեն քնար
Ոչ էլ ծովերի ափերն եմ փախչում,
Վայրենի երգս երգելու համար.

Բայց ճանաչում եմ ես մի ժողովուրդ
Ճտահար թաղված տառապանքներում,
Ունեմ և հոգումս մի գաղտնի խորհուրդ
Ինձ [հրապարակ նրանք] են բերում.

Նրա ցավն է ինձ ոգի ներշնչել,
Նրա տանջանքն է շունչը իմ երգի,
Եվ ո՞վ է կարող իմ երգը մերժել
Որպես հառաչանքն իմ ժողովրդի.

Անթիվ դարերի անողորմ հարված,
Լլկանք ու ավեր,
Եվ ահա այսօր նա խեղաթյուրված
Դատ է պահանջում թշնամու գլխին
Եվ իրավունքներ.
Էլ ո՞վ էր կարող այդպես բողոքել,
Թե կարենայի եղածը երգել։